ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

# ՀՐԱՄԱՆ

05 հոկտեմբերի 2020 թվականի N 112-Լ

## ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի «դ» կետով, հիմք ընդունելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի պահանջը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 31-րդ կետի 1-ին ենթակետը, 32-րդ կետը ու 33-րդ կետի 2-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Ստեղծել արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) աշխատակիցների տարահանման հանձնաժողով:

2. Հաստատել՝

1) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ Ծառայության աշխատակիցների տարահանման հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ Ծառայության աշխատակիցների տարահանման հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ Ծառայության աշխատակիցների տարահանման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ Ծառայության

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Ծառայության գլխավոր քարտուղարին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Ռ. ԶԱՔԱՐՅԱՆ

10/5/2020

X

ՌԱՖԱՅԵԼ ԶԱՔԱՐՅԱՆ

Signed by: ZAKARYAN RAFAYEL 4005860638

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության պետական
վերահսկողական ծառայության ղեկավարի
2020 թ. 10 ի 05-ի N 112-Լ հրամանի

# ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
# ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| Հ/Հ | Պաշտոնը | Հանձնաժողովում զբաղեցրած պաշտոնը | Անունը, ազգանունը |
|---|---|---|---|
| 1. | ՀՀ պետական վերահսկողական ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար | հանձնաժողովի ղեկավար | Անի Բաղդասարյան |
| 2. | ՀՀ պետական վերահսկողական ծառայության առաջին բաժնի գլխավոր մասնագետ | հանձնաժողովի ղեկավարի տեղակալ | Արտակ Անտինյան |
| 3. | Գործերի կառավարման և գնումների կազմակերպման բաժնի պետ | հանձնաժողովի անդամ | Մարգարիտա Պողոսյան |
| 4. | Կարգապահական և ներքին հսկողության բաժնի պետի պաշտոնակատար | հանձնաժողովի անդամ | Արամ Մովսիսյան |
| 5. | Անձնակազմի կառավարման բաժնի պետ | հանձնաժողովի անդամ | Նոննա Ամիրյան |
| 6. | Ընդհանուր բաժնի պետ | հանձնաժողովի անդամ | Գայանե Արզումանյան |
| 7. | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ոլորտների վերահսկողության վարչության գլխավոր վերահսկող | հանձնաժողովի անդամ (ուղղորդող) | Հովհաննես Մալխասյան |
| 8. | Պետահիրավական ոլորտի վերահսկողության վարչության գլխավոր վերահսկող | հանձնաժողովի անդամ (ուղղորդող) | Տիգրան Քանքանյան |
| 9. | Տնտեսական ոլորտի վերահսկողության վարչության ավագ վերահսկող | հանձնաժողովի անդամ (ուղղորդող) | Արման Սմբատյան |

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության պետական
վերահսկողական ծառայության ղեկավարի
2020 թ. 10 ի 05-ի N 112-Լ հրամանի

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

## 1. Ընդհանուր դրույթներ

1. Արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) աշխատակիցների տարահանման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ստեղծվում է արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ վտանգավոր տարածքներից Ծառայության աշխատակիցների, կարևոր փաստաթղթերի տարահանումը, ինչպես նաև նյութական ու մշակութային արժեքների դուրս բերումը կազմակերպելու և համակարգելու նպատակով:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն որոշմամբ, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

## 2. Հանձնաժողովի հիմնական խնդիրները և իրավասությունները

3. Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝

1) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ վտանգավոր տարածքներից Ծառայության աշխատակիցների տարահանումը, փաստաթղթերի տարահանումը, ինչպես նաև նյութական ու մշակութային արժեքների դուրսբերման աշխատանքների կազմակերպումը.

2) Ծառայության աշխատակիցների տարահանման, ինչպես նաև նյութական ու մշակութային արժեքների դուրսբերման համար տրանսպորտային միջոցներով ապահովման կազմակերպումը.

3) Ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից տարահանման պլանների մշակման ժամանակ անհրաժեշտ մեթոդական և գործնական օգնության ցուցաբերումը.

4. Հանձնաժողովն իրավասու է՝

1) իր նիստերում պարբերաբար լսել Ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների տեղեկատվությունը տարահանման ծրագրերի և պլանների մասին.

2) Ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից ստանալ տեղեկատվություն տարահանման աշխատանքների կազմակերպման և իրականացման մասին.

3) Ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների տարահանման պլանների հիմնավորվածությունը ստուգելու նպատակով մասնակցել անցկացվող ուսումնավարժություններին:

## 3. Հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումը

5. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի ձևով, որոնք գումարվում են արտակարգ իրավիճակի և ռազմական դրության ժամանակ, ինչպես նաև հանձնաժողովի ղեկավարի որոշմամբ:

6. Հանձնաժողովի ղեկավարը՝

1) սահմանում է հանձնաժողովի ղեկավարի տեղակալի և հանձնաժողովի անդամների պարտականությունները՝ արտակարգ իրավիճակներում Ծառայության աշխատակիցների տարահանման պլանների մշակման, դրանց հիմնավորվածության, այդ պլաններով նախատեսված միջոցառումների իրականացման հարցերի գծով.

2) ղեկավարում է հանձնաժողովի նիստերը.

3) Ծառայության աշխատակիցների տարահանման ժամանակ մշտական կապ է պահպանում տարահանումն իրականացնող մարմինների հետ.

4) Ծառայության կառուցվածքային ստորաբաժանումներից պարբերաբար ստանում է տեղեկություններ տարահանվող աշխատակիցների, նյութական արժեքների թվի, տարահանման ընթացքի, տրանսպորտային միջոցների հատկացման մասին.

5) համագործակցելով համապատասխան ծառայությունների հետ՝ կազմակերպում է Ծառայության տարահանվող աշխատակիցների համակողմանի ապահովումը և պաշտպանությունը:

7. Հանձնաժողովի ղեկավարի բացակայության դեպքում, նրա հանձնարարությամբ, հանձնաժողովի ղեկավարի պարտականությունները կատարում է ղեկավարի տեղակալը, վերջինիս անհնարինության դեպքում՝ Հանձնաժողովի ղեկավարի հանձնարարությամբ Հանձնաժողովի անդամներից մեկը:

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության պետական
վերահսկողական ծառայության ղեկավարի
2020 թ. 10 ի 05-ի N 112-Լ հրամանի

# ԿԱՐԳ
# ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու, ինչպես նաև արտակարգ իրավիճակների առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) աշխատակիցների տարահանման գործընթացի հետ կապված հարաբերությունները:

2. Սույն հրամանի իմաստով Ծառայության աշխատակիցներ են համարվում Ծառայության վարչական շենքում (ք. Երևան, Մաշտոց պող. 47) քաղաքական, հայեցողական, քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք, ինչպես նաև քաղաքացիական աշխատանք կատարող, փորձագետներ, իրավախորհրդատուներ և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմը:

3. Սույն կարգի 1-ին կետում նախատեսված դեպքերում Ծառայության աշխատակիցների տարահանման որոշումը կայացնում է Ծառայության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը, վերջիններիս բացակայության դեպքում Ծառայության գլխավոր քարտուղարը:

4. Տարահանման մասին Ծառայության աշխատակիցները տեղեկացվում են ազդարարման միջոցով, որը փոխանցվում է բջջային և ֆիքսված հեռախոսակապի, կամ սուրհանդակների միջոցով:

5. Ծառայության աշխատակիցների տարահանման միջոցառումները ղեկավարում է հանձնաժողովի ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

6. Ուղղորդողների հիմնական պարտականությունն է՝ տարահանման երթուղիներում կազմակերպել աշխատակիցների ելքը դեպի դուրս՝ բացառելով խուճապը և խցանումները:

7. Ծառայության աշխատակիցները՝ ստանալով տարահանման մասին ազդարարումը, անջատում են համակարգիչները, էլեկտրական սարքերը, «գաղտնի», «հույժ գաղտնի» նշագրում ունեցող փաստաթղթերը պահում են երկաթյա պահարանում, վերցնում են անձնական փաստաթղթերը և իրերը, հնարավորության դեպքում՝ նաև համակարգիչները, դուրս են գալիս միջանցք ու հետևում հանձնաժողովի և ուղղորդողների հրահանգներին: Աշխատասենյակից վերջինը դուրս է գալիս ստորաբաժանման ղեկավարը կամ ավելի բարձր պաշտոն զբաղեցնող անձը՝ համոզվելով, որ մյուս աշխատակիցները դուրս են եկել աշխատասենյակից: Աշխատակիցները շենքից դուրս են գալիս աստիճանավանդակներով, հնարավորինս արագ՝ առանց խուճապ և խոչընդոտներ առաջացնելու:

8. Ծառայության աշխատակիցների տարահանումն իրականացվում է համապատասխան տարահանման ուրվագծի:

9. Արտակարգ իրավիճակների դեպքում Ծառայության տարահանված աշխատակիցները հավաքվում են Ծառայության վարչական տարածքի բակի ազատ տարածքներում:

10. Ռազմական դրության պայմաններում՝ հրթիռահրետանային հարվածների և «Օդային տագնապ» ազդանշանի դեպքում, Ծառայության աշխատակիցները պատսպարվում են Ծառայության վարչական շենքի կիսանկուղային հարկում: